Սեյրան Մինասյանը վերընտրվեց ՀՀ ԳԱԱ Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում

Սույն թվականի օգոստոսի 19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը ՀՀ ԳԱԱ Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի (ՀՀ ԳԱԱ ՔՖԻ) տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրեց քիմիական գիտությունների թեկնածու Սեյրան Մինասյանին:

Սեյրան Մինասյանը ներկայացրեց իր պաշտոնավարման ժամանակ ՀՀ ԳԱԱ ՔՖԻ-ում իրականացված աշխատանքները և նախատեսվող զարգացման ծրագրերը: Ինստիտուտը 3 տարվա ընթացքում ստացել է շուրջ 30 դրամաշնորհ ու ծրագրային պատվեր: Ինստիտուտի բյուջեն աճել է 4-5 անգամ: Վերազինվել են ինստիտուտի գիտահետազոտական բազան և ենթակառուցվածքը: Ինստիտուտի գիտական անձնակազմը երիտասարդացել է:

Առաջիկա տարիներին ՀՀ ԳԱԱ ՔՖԻ-ում իրականացվելիք միջոցառումների մասին Սեյրան Մինասյանը նշեց, որ նախատեսվում է Բարձր էներգիական նյութերի և պրոցեսների ուսումնասիրության նոր լաբորատորիայի ստեղծում, Երևանի պետական համալսարանի, Ռուս-հայկական համալսարանի հետ բազային 2 լաբորատորիաների ստեղծում, ինչը հնարավորություն կտա իրականացնելու համատեղ գիտակրթական ծրագրեր: Նախատեսվում է նաև արտերկրից գիտնականների ներգրավմամբ 3-4 նոր լաբորատորիաների և խմբերի ստեղծում, գիտական հաշվողական երկու հանգույցի ստեղծում:

Սեյրան Մինասյանը ծնվել է 1963 թ. ՀՀ Գյումրի քաղաքում: 1985 թգ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Քիմիայի ֆակուլտետը՝ ստանալով քիմիկոսի որակավորում: 1988 թ. ավարտել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան՝ կինետիկա և կատալիզ մասնագիտությամբ: 1988-1991 թթ. աշխատել է ԳԱԱ ՔՖԻ-ի Հեղուկաֆազ ազատ ռադիկալային ռեակցիաների լաբորատորիայում՝ որպես ավագ լաբորանտ, այնուհետև որպես գիտաշխատող, ապա ավագ գիտաշխատող: 1991-1992 թթ. եղել է Գյումրի քաղաքի Շիրակի շրջանի շրջանային խորհրդի նախագահի տեղակալը: 2004-2013 թթ. աշխատել է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ որպես զարգացման սեկտորի պետ, գիտաարտադրական սեկտորի պետ, տնօրենի տեղակալ գիտաարտադրական հարցերով: 2018 թ.-ից ՀՀ ԳԱԱ ՔՖԻ քիմիական անվտանգության ֆիզիկա-քիմիական հիմնահարցերի գիտական խմբի ղեկավարն է: 2019 թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ ՔՖԻ-ի տնօրեն:

Սեյրան Մինասյանը շուրջ 120 գիտական աշխատանքի հեղինակ է: Մասնակցել է 4 միջազգային գիտական դրամաշնորհային և մոտ 20 միջազգային փորձագիտական և խորհրդատվական ծրագրերի: